



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material




Handwritten text, possibly a name or title, in cursive script.

Handwritten text, possibly a name or title, in cursive script.



ՀԱՒԱԲԱՆԾՈՅ Թ. ԷՋՅՏԵԱՆ Ի ԹԻՒ...

ԸՆԴՊՆԱԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ



Ա. ԱՅԿԱՄԱԿԱՆԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻՍ ԶՄԻՒՆԻՈՅ



ՏՊԱԳՐԵԱԼ

ՎԱՆԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

ԸՕԳԸՅԻՆ

ՔԵՂԱՅԻ ԵԿԸՆ ԺՈՂՈՎՈՅ



ԶՄԻՒՆԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻՆԱՆ

1862

67259p m

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԱՐԻ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ՏԻՖԼԻՍԻ ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՈՄԻՏԵ



Գործոցներուն յառաջագիմուծիւնը եւ արդիւնաւորութիւնը՝ մասնաւորաբար տնոնց ներքին բարեկարգութենէն կախում ունենալը յայտնի է ամենուրեք : Այս բարեկարգութեան էութիւնը եւ տեսչութիւնը անշուշտ մասնաւոր կանոնագրութեան մը վրայ կրթնած է, ըստ որում գործոցներուն անկանոն վարչութենէ յառաջ եկած նիւթական եւ բարոյական վնասները թէ աշակերտաց եւ թէ ազգին նկատմամբ մեծ եւ ցաւաշի են . ուստի եւ մեք սուրբ Մեծորդեան վարժարանիս վիճակը աւելի եւս շաւաղցնելու եւ յառաջացնելու սրբազան դարաւորութենէ մշուելով՝ ներկայ կանոնագրութիւնը Մեծադատիւ Քաջաբակեան Եղեղոյն համահաճութեամբք ՚ի շոյս կ'ընծայենք :



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and is significantly faded.



# ԻՆԴԻՏԻՆԻՔԻ ԿԱՆՈՒՄ

## Ս. ՄԵՍՐՈՎՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՍ

### ԶՄԻՒՆՈՅ

#### ՔԼՈՒԹ Ա.

#### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ Ի ՎԱՐԺԱՐԱՆՍ

1. Մեսրոպեան վարժարանս Հայոց ազգին մանկանց համար կանգնուած ըլլալուն՝ օտարազգի աշակերտ չ'ընդունուի :

2. Տղայ մը վարժարան մտնելու ժամանակ դո՛նէ վեց տարեկան պէտք է ըլլայ, իւր հայրը կամ խնամածուն պարտաւոր է Ուսումնական խորհրդոյ ներկայացընել զանի :

3. Վարժարանը տղայքը կ'ընդունի ամեն չորեքշաբթի օրեր, վասն զի խորհրդին նիստը առայժմ՝ նոյն օրը կ'ըլլայ վարժարանիս թանգարանին մէջ :

4. Տղայ մը եթէ փոխադրական ախտ ունի չ'ընդունուի, մինչև որ կասարելասէս չ'բժշկուի :

5. Աշակերտ մը վարժարան յանձնուելէն ետև՝ անոր հայրը կամ խնամածուն իրաւունք չունի վարժարանիս կարգադրութեան հակառակելու, այլ տեսուչը խորհրդով դասատուաց տղուն կարողութեան համեմատ կրնայ այն դասարանը դնել որուն որ արժանաւոր է աշակերտը :

6. Վարժարանին բաց եղած օրերը ծնողք իրաւունք չ'ունին իրենց զաւակաց երթալուն արդելք ըլլալու առանց բանաւոր պատճառի :

7. Աշակերտի մը դպրոցէն պակսելուն բանաւոր պատճառներն են

Տղուն հիւանդութիւնը .

Բժշկի երթալու անհրաժեշտ հարկաւորութիւնը .  
Բնտանեաց բացակայութիւնը :

8. Աշակերտ մը երկար ժամանակ վարժարանէն պակսելէն ետքը՝ երբ նորէն վարժարան դայ, տեսուչը անոր կարողութեան համեմատ պէտք եղածը կը անօրինէ :

9. Աշակերտ մը եթէ առանց բանաւոր պատճառի առնէն կանչուելու ըլլայ՝ երբէք հրաման չ'տրուիր երթալու :

10. Վարժարան եկող աշակերտաց զգեստները մաքուր, գլուխնին սանտրուած, եղունդնին կտրուած, երեսնին ձեռքերնին ու ոտքերնին մաքրուած ըլլալէ զատ, պէտք է որ թաշկինակ ունենան և քովերնին խաղալիք չ'զանուի :

11. Աշակերտք առաւօտուն վարժարան գալէ յառաջ պարտին եկեղեցի երթալ, ու վարժարանը բացուելուն պէս հոն գանուիլ. իսկ հանդիսաւոր օրեր և կիրակի առաւօտներ ընդհանուր աշակերտաց պարտքն է եկեղեցի երթալ, ու որոշեալ տեղերնին կենալ ընդ վերատեսչութեամբ վարժապետաց, տեսչին կարգադրութեան համեմատ :

12. Աշակերտք վարժարան եկածնուն պէս, որոնք որ դասարանները պիտի մտնեն իրենց պէտք եղածները հետերնին առնելով՝ կարգաւ երթան, իսկ սրահներուն մէջ մնացածները հանդարտ իրենց

ուսմանցը պարապին :

13. Աշակերտք դասարան մանե լէն ետե եր-  
բէք դուրս չեն կրնար ելնել առանց հրամանի դա-  
սասուին :

14. Աշակերտք դասարանին մէջ ըստ կարի  
այն լեզուաւ պարտին խօսիլ որ լեզուն որ դաս  
կառնուն նոյն միջոցին :

15. Վարժարանիս մէջ բոլոր աշակերտք պէտք  
է որ միշտ մաքուր հայերէն խօսին, ու հայերէն  
խօսելու ժամանակնին օտարոտի բառեր երբէք չը  
գործածեն : Այլ և թէ վարժարանին մէջ և թէ  
դուրսը հայհոյութիւն, երգում չ'ընեն, ու բարոյա-  
կանի դէմ խօսքեր չ'խօսին, ծա' քա' մասնիկները  
արդիլեալ են բնաւ երբէք չ'գործածելու, այլ  
Պարոն, եղբայր կամ բուն անունը կանչեն :

16. Աշակերտ մը ազգային լեզուին սկզբուն-  
քը դեռ չ'սորված չկրնար օտար լեզու մը ուսա-  
նելու սկսիլ :

17. Օտար լեզու մը սորվել ուզող աշակեր-  
տը իւր հօրմէն կամ պաշտպանէն առ Խորհուրդն  
բերել պէտք է հաւանութեան դիր մը, որուն մէջ  
նշանակուած պէտք է ըլլայ աղուն սորվելու լե-  
զուն :

18. Օտար լեզու սկսելու սահմանեալ ժա-  
մանակը երեքի բաժնուած է :

Ա. Օղոստոս ամսոյն 16ին, որ վարժարա-  
նին տարեդրուխն է :

Բ. Գեկտեմբեր 16ին,

Գ. Ապրիլ 16ին : Այս ժամանակներէ դուրս  
աշակերտ մը չ'կրնար օտար լեզու սկսիլ :

19. Գասարանի մը աշակերտները երբ ու

Հայերէն քերականութեան Ա. մասը բաւական սորված ըլլալուն իրենց դասատուէն վկայութիւն ընդունին, այն ատեն կրնան օտար լեզու սկսիլ, իսկ երկրորդ լեզու մ'ալ սկսելու համար հարկ է որ երկրորդ դասարանի աշակերտը հայերէն քերականութեան երկրորդ մասն ալ բաւական սորված ըլլալուն վկայութիւն ունենայ իւր դասատուէն:

20. Արբոր վարժարանին զանգակը լոութիւն կը հրամայէ, աշակերտք պարտին խորին լութեամբ ուսման պարասիլ:

21. Աշակերտ մը սրահէն դուրս ելնելու համար՝ պէտք է որ հրաման ընդունի, ու շուտով վերադառնայ:

22. Արեւի շէ մէկու մը մասնաւոր դասատուութեան համար միայն վարժարան գալ ու մեկնիլ:

23. Վարժարանիս դասատուութիւնները ընդհանուր ըլլալով աշակերտ մը չ'կրնար մասնաւոր դաս առնուլ վարժարանիս մէջ որ և իցէ վարժապետէ մը:

24. Աշակերտաց դատարանապետութիւնը արին երկու անգամ պիտի ըլլայ, առաջինը՝ ընդհանուր հարցաքննութենէ ետքը օգոստոս ամսոյ կէսին, և երկրորդը՝ փետրուարի կէսին ըստանօրէնութեան Աստուծական խորհրդոյ:

25. Վերին սրահի աշակերտները գոնէ երեք տարի պարտաւոր են վարժարան գալու, իրենց պէտք եղած ուսմունքները կատարելադորձելու համար:

26. Վարժարանիս կանոնաց չ'հնազանդող աշակերտաց համար հետեւեալ պատիժները սահմանուած են:

Նախ՝ առանձին կը խրատուի:

Երկրորդ՝ հրապարակաւ կը խրատուի .

Երրորդ՝ գրաւոր պատիժ կը տրուի ըստ յան-  
ցանացն , զոր եթէ որոշեալ ժամանակին չ'կատարէ՝  
նոյն կամ հետեւեալ օրուան ճաշէն կը զրկուի՝ ի-  
րեն տրուած գրաւոր պատիժը նոյն միջոցին կատա-  
րելու համար :

Չորրորդ՝ յանցաւոր աշակերտը յանցանքին  
համեմատ դասարանէն կը զրկուի մէկ օրէն մինչև  
մէկ շաբաթ գրաւոր պատիժներ ընդունելով :

Հինգերորդ՝ յանցաւոր աշակերտը՝ յանցանքը  
թղթի մը վրայ նշանակուած ու վղէն կախուած՝ այն-  
պիսի տեղ մը պիտի կանգնի ուր ամենքը տեսնեն  
ղինքը :

Վեցերորդ՝ թէ որ աշակերտ մը , իւր յան-  
ցանքին համեմատ , պատիժը կրելէն վերջը , դար-  
ձեալ անհնազանդութեամբ ծանր յանցանքներ գոր-  
ծէ և վարժարանէն վռնտուելու չափ հարկ ըլլայ ,  
յայնժամ Աստուծական խորհուրդը կը պարտաւորի  
նոյն աշակերտին անվայել ընթացքը նշանակելով ,  
ղանի մասնաւոր նամակաւ Քաղաքական ժողովոյն  
խաւրել , և որուն որոշումը նոյն ժողովոյն հաւա-  
նութեամբը պիտի գործադրուի :

### ՊԼՈՒԽ Բ .

ԱՇԿԵՐՏԱՅ ԳԱՐԺԱՐԱՆԻ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ  
ԳԱՅՄԱՆՆԵՐԸ .

27. Աշակերտ մը Աստուծական խորհրդին  
հաւանութիւնը չ'առած չ'կրնար վարժարանէն հրա-  
ժարիլ :

28. Աշակերտ մը իւր վարուց և սւամանց վը-

խայաղերը խորհուրդին կողմանէ ընդունելէ ետքը միայն պէտք է հրատարի :

29. Աշակերտի մը երբոր իւր ուսմունքը կատարելագործէ և ուղէ հրատարիլ, պէտք է շնորհակալութեան դիր մը դրէ խորհրդին իբր յայտարար նշան իւր երախտագէտ զգացմանց :

## ՔԼՈՒԽ Ք

### ՆՊԱՏԱԿ ՎԱՐՃԱՐԱՆԻՄ

30. Սուրբ Մեսրոպեան վարժարանի նախառակն է Հայազգի մանկունքը ո՛չ միայն հայկաբանութեան և լեզուադիտութեան մէջ զարդացընել՝ այլ և բարոյական, հայրենասիրական և կենցաղական հմտութեանց մէջ դաստիարակել, վասն որոյ վարժարանիս մէջ հետևեալ ուսմունքները հաստատուած են :

Ա. ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ .

Բ. ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ .

Գ. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .

Դ. ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

Ե. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .

Զ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ .

Է. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

Ը. ՏՈՄԱՐԱԿԱՂՈՒԹԻՒՆ .

Թ. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ . ( հաստատելի )

Ժ. ԴԻՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

ԺԱ. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .

ԺԲ. ԳԱՂՂԻԱՐԷՆ .

ԺԳ. ԱՆԳՂԻԱՐԷՆ .

- ձԴ . ՏԱՃԿԵՐԷՆ .  
 ձԵ . ՅՈՒՆԱՐԷՆ .  
 ձԶ . ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ .  
 ձԷ . ԱԼՃԵՊԸԱ . ( Հասարակի )

ՊԻՈՒԹ Գ .

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԴԱՍԱՐԱՆԱՅ ԵՒ ՈՒՍՄԱՆՑ .

Յ1 . Վարժարանս ութ դասարան ունի ,  
 Ութերորդ դասարանին ուսմունքը ,  
 ԱՅԲԲԵՆԱՐԱՆ .

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ .

ՍԿԶԲՈՒՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՑ .

Եօթներորդ դասարանի ուսմունքը .  
 ՀԵԳԵՐԷՆ .

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ .

ԳԻՐ .

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ :

Վեցերորդ դասարանին ուսմունքը .

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ .

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ԸՆԹԵՐՅՈՒՄՆ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ ԹՈՒԱՆՇԱՆԻՑ .

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՔ .

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԻՆՉԵՒ ՅԴԵՐԱՆՈՒՆ .

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ :

Հինգերորդ դասարանի ուսմունքը .

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՆՈՒՆ , ԳԵՐԱՆՈՒՆ ԵՒ ԲԱՅ .

ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ .

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ .

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ՝ ՊԱՐԶ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ .

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ՄԱՆԲ ՈՒՍՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ :

*Չորրորդ դասարանին ուսմունքը .*

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՄԲՈՂԶ ՈՒԹ ՄԱՍՆ ԲԱՆԻ .

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ .

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ ՄԱՍԸ ,

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ՝ ՊԱՐԶ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՒ ՀԱՆՄԱՆ .

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ .

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ՄԱՆԲ ՈՒՍՄՈՒՆՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ :

*Նորրորդ դասարանի ուսմունքը .*

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ,  
ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ .

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՔ .

ԳՐԱԽՈՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆՔ ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ .

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԵԱՆ .

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՄԱՍԸ ,

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ՝ ՊԱՐԶ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ,  
ՀԱՆՄԱՆ , ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ ,

ԵՒ ԲԱԺԱՆՄԱՆ .

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՄԲՈՂԶ .

ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ .

ԸՆԴԱՐՉԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ :

*Արկրորդ դասարանին ուսմունքը .*

Բ . ՄԱՍՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ .

ԿՐԹՈՒԹԻՒՆՔ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱՑ

ՎՐԱՅ .

ԲԱՆԱԻՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ .

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԵԱՅ .

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՇԽԱՐՀ . 'Ւ ԳՐԱԲԱՌ .

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՌ .

ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .

ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ՝ ԲԱԳՐԱՏ . ՄԱՍԸ .

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

ԱՇԽԱՐՀ . ՔԱՂԱՔԱԿԱՆ՝ ԵՒՐՈՊԱ , ԱՍԻԱ ԵՒ

ԱՓՐԻԿԷ .

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ :

*Առաջին դասարանին ուսմունքը ,*

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ .

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

ԱՋԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋ .

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ՝ ԱՄԵՐԻԿԱ .

ՈՎԿԻԱՆԷԱ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ԱՄԲՈՂԶ ,

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

ԱԼՃԵՊԲԱ .

ՏՈՄԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ .

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ .

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ .

ԴԻՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ .

ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ :

## ԳԼՈՒԽ Ե .

ԺԱՄԱԿԱՆԳՈՒԹԻՒՆՔ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ .

32. Վարժարանս ամառը առաւօտուն ժամը 7ին , իսկ ձմեռը 8ին կը բացուի :

33. Մատ և ձմեռ օտար լեզուաց դասատուութիւնը ժամը 8ին կ'սկսի , և 10ին կը վերջանայ , բայց 'ի Գաղղիարէն լեզուի դասատուութեանէ , որն որ ձմեռը կէսօրէն ետքը ժամը 1էն մինչև 4 , և ամառը կէսօրէն ետքը ժամը 2էն մինչև 5 ըստ Եւրոպացւոց :

34. Ժամը 10էն մինչև 11 <sup>1</sup>/<sub>2</sub> վարժարանիս ընդհանուր ուսանողաց Հայերէն լեզուի դասատուութեան ժամանակն է , որ ոչ երբէք սրահը մէկը կրնայ դռնուիլ , և անկէ մինչև ժամը 12 տեսուչը դասատուներուն զրկած ծանուցադիրները քննելով՝ յանցաւոր աշակերտաց պատիժներ կը սահմանէ , և աշակերտաց մաքրութիւնը զննելէ ետև 'ի ճաշ կ'արձակէ :

35. Կէսօրէն ետքը ժամը 1ին վարժարանս կը բացուի և աշակերտք մինչև ժամը 2 իրենց դասուց պատրաստութեան կ'ընթացին ժամը 2էն մինչև 4 ուսմանց դասատուութիւն կը լլայ :

36. Մատը ժամը 4էն մինչև 5 աշակերտաց զբօսանաց ժամանակն է , ու 5էն սկսեալ դէպ 'ի 6 ( ըստ երկայնութեան աւուրց ) ուսման կը պարապին , և ապա կ'արձակուին . իսկ ձմեռ օրերը կարճ ըլլալուն պատճառաւ արձակումը ժամը 4ին կ'ըլլայ :

## ԳԼՈՒԽ Զ .

ՎԱՐԺԱՐԱՆՍ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՈՅՆ ԸՆԹԱՑԻՐ .

37. Օգոստոս 16ին զպրոցական տարւոյն սկիզբն է :

38. Վարժարանս տարին անգամ մը ընդհանուր Հարցաքննութիւն ունի , որ կսկսի Յունիս 18ին և կը տևէ մինչև Յուլիս 15 և հետևեալ օրը Պարզեարաշխութեան հանդէսը կը կատարուի , յորմէ սկսեալ մինչև Օգոստոս 16՝ աւուրք պարապոյ են :

39. Օկնի Հարցաքննութեան աշակերտաց վարուց և ուսմանց տեղեկագիրները կը զըկուին իրենց ծնողաց :

40. Վարժարանս անհրաժեշտ պարտք դրած է ընդհանուր աշակերտաց վրայ Սուրբ Օատկին և Սուրբ Ծննդեան օրերը խոստովանիլ և Հաղորդութիւն առնել խմբովին :

## ԳԼՈՒԽ Է .

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍՈՒՑՉԱՅ ԸՆԴՈՒՆԵ-  
ԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .

41. Վարժարանիս հողատարութիւնը Ուսումնական Խորհրդոյ յանձնուած ըլլալով՝ պէտք եղած տեսուչը , ուսուցիչները ու դոնապանները որոշելով՝ Քաղաքական Ժողովոյն իմաց կու տայ և անոր հաստատութեամբը կը տնօրինէ :

42. Վարժարանիս Հայկաբանութեան ուսուցիչները պէտք է որ ունենան հաստատուն ընթացք բարի վարուց և Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ

ուղղափառ կրօնից՝ դաւանութեան մէջ, և ըլլան քաջաոռղջ և իրենց վարելու պաշտօնին հմուտ :

43. Որ և իցէ անձի մը պաշտօնով վարժարան ընդունուիլը՝ պէտք է որ Աւսումնական Խորհրդոյ անդամոց համակամ որոշմամբը ըլլայ :

44. Օտար լեզուաց դասատուները նոյն լեզուի աղղէն և անոնց երկրորդականները հարկաւ Հայաղղի ըլլալ պէտք են՝ ի դիւրութիւն ուսանողաց :

Պ.ՈՒԽ Ը.

ՎԱՐՃԱՐԱՆԻՍ ՊԱՐԱԳՈՅ ՕՐԵՐԸ

45. Ըմէն կիւրակէ և խաչանիշ տօն օրերը .

Ըմէն շաբաթ օրերը կէսօրէն եաւ .

Բուն բարեկենդանին 4 օր .

Չաակին 6 օր Ըւայ հինդշաբթիէն սկսեալ .

Ծննդեան 3 օր .

Ըմառնային հանդիստ 1 ամիս :

Պ.ՈՒԽ Թ.

ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

46. Հարցաքննութիւնը պէտք է ըլլայ ՚ի ներկայութեան Գերատաաիւ Ըռաջնորդին Օմիւռնոյ . Աւսումնական Խորհրդոյ անդամոց ու երեւելի ուսումնականաց , որոց հրաւեր պիտի ըլլայ լրացրաց միջոցաւ և կամ ծանուցմամբ .

47. Իւրաքանչիւր աշակերտաց համառօտ և խիստ անաչառ հարցումներ կ'ըլլան , հանդիսականք ալ ազատ են անաչառապէս քննելու զաշակերտս :

48. Ընդհանուր հարցաքննութեան սկիզբը



տեսուչը իւրաքանչիւր դատարաններու հոյն տա-  
րւոյն մէջ ունեցած ընթացքը պէտք է դրով ներ-  
կայացընէ հանդիսականաց և յընթացս հարցաքըն-  
նութեան իւրաքանչիւր աշակերտաց տուած պա-  
տասխաններուն ու հանդիսականաց վկայութեան  
համեմատ անոնց յառաջագիմութեան աստիճանը  
արձանագրէ :

49. Պարզեաբաշխութեան հանդէսը կը բա-  
ցուի Ուսումնական Խորհրդոյն ատենարանու  
թեամբը :

50. Պարզեաբաշխութեան հանդիսին մէջ  
թատրերդութիւն կամ ողբերգութիւն մը կը ներ-  
կայացուի, եթէ Ուսումնական Խորհուրդը առա-  
ջարկած ըլլայ ամիս մը յառաջ :

ՊԼԱՆԻՑ Ժ .

ՎԱՐԺԱՊԵՏ Բ

51. Ներքին դատատուները ամառը առաւօ-  
տուն ժամը 7ին . իսկ ձմեռը 8ին ( ըստ Աւրոսյա-  
ցւոց ) պարտաւոր են վարժարան գալ և ճաշու-  
ատեն մեկնիլ : Նոյնպէս կէսօրէն ետև ժամը 1էն  
մինչև արձակման զանգակին ժամանակ վարժարան  
մնալ :

52. Արտաքին վարժապետք իրենց որոշեալ  
ժամանակին պարտաւոր են վարժարան գալ, և ո-  
րոշեալ ժամանակին մեկնիլ :

53. Վարժապետք պէտք չէ որ վարժարանէն  
պակսին, բայց թէ որ բանաւոր պատճառով պակ-  
սելու հարկադրին, պարտին դրով տեսչին իմա-  
ցընել :



54. Աւերքին կամ արտաքին դասատու մը թէ առանց բանաւոր պատճառի վարժարանէն պատկու ըլլայ՝ ամէն թիւ անդամին համար 100 դր հեկան կորսնցընելու է. իսկ եթէ ամիսը 4 ան դամ պակսելու ըլլայ՝ անոր այն ընթացքը իհարժարական ընդունելու է :

55. Աւերին և ստորին սրահները կառավարելու անձերն ու ժամերը Աւսումնական Խորհուրդը կ'որոշէ և ըստ այնմ կը կատարուի :

56. Թէ դասարաններու և թէ ուսման սրահներու մէջ վարժապետք իշխանութիւն ունի անկարգ աշակերտները նշանագրելու, խօսքով զսպելու և 'ի պահանջել հարկին գրով տեսչի իմացընելու :

57. Իւրաքանչիւր դասատու միայն իրե՛յանձնուած դասերը պիտի տայ, և ո՛չ ուրիշ բան :

58. Արտաքին դասատուները վարժարան եկած ատեննին ուղղակի իրենց դասարանները պիտի քաշուին :

59. Կառավարութեան կարգը կատարող անձին քով ուրիշ դասատու մը առանց բանաւոր պատճառի արտօնութիւն չունի երթալու, և ինքն ալ նոյն ժամուէն կառավարութեանէն զատ ուրիշ դործով չկրնար զբաղիլ և կամ դէրք, լրագիր և այլն կարգալ :

60. Եթէ փորձով իմացուի որ վարժապետ մը կամ տեսուչը մասնաւոր դիտաւորութեամբ կամ անձնական շահու համար՝ տեսչին կամ վարժապետի մը դէմ տղայքը կը զրդոէ, Աւսումնական Խորհրդոյն որոշմամբը այնպիսեոյն պատիժը Չճեքորդ յօդուածին համեմատ 'ի գործ պիտի գրուի :

61. Թէ տեսուչը և թէ վարժապետք արտօնութիւն չ'ունին վարժարանիս մէջ մասնաւոր դասատուութիւն կամ դասատուութիւն ընել որ և իցէ լեզուի կամ ուսման :

62. Ամէն վարժապետք իրենց աշակերտաց վարուց և ուսմանց ցուցակը պարտին ունենալ :

63. Աերբին կամ արտաքին դասատու մը իւր դասախօսութեան ժամանակ ո՛չ իւր պաշտօնակցին քով կրնայ երթալ և ո՛չ դուրսէն այցելու մը դասարանին մէջ ընդունիլ :

64. Վարժապետ մը արտօնութիւն չ'ունի տղոց թուղթ, գրիչ և այլն ծախելու՝ բաց 'ի վարժարանին մատակարարէն :

65. Արտաքին վարժապետք բաց 'ի իրենց Աղանդի, Օննդեան և Օսակի տօներէն ուրիշ տօներ պատճառ բռնելով վարժարանին բաց եղած օրերը չեն կրնար պակսիլ :

66. Արտաքին դասատու մը վարժարան ընդունուելու ժամանակ պէտք է որ իւր ուսուցանողական եղանակը այսինքն մեթոտը ներկայացնէ խորհուրդին, որն որ եթէ զայն՝ դասատուին կարողութիւնը քննելէ ետքը՝ արժան դատէ, հասարին է անոր ընդունելութիւնը :

67. Աերբին դասատուները հանդիսաւոր տօն օրեր և կիրակէ առաւոյններ պարտաւոր են ելեղեցի երթալ և իրենց աշակերտաց քով կենալ :

68. Աերբին և արտաքին վարժապետք եթէ ինքնակամ հրաժարելու ըլլան՝ պարտաւոր են ամիս մը յառաջ իմացընել Աւսումնական խորհրդոյ, և խորհուրդն ալ կը պարտաւորի անմիջապէս վարժապետին հրաժարումն Քաղաքական ժողովին հաղորդելու :

դելու : Աոյնպէս եթէ խորհուրդը վարժապետէ մը  
 դժգոհի , և զանի իւր պաշտօնէն հրաժարելու ար-  
 ժան դատէ , հարկ է իւր որոշումն ամիս մը յառաջ  
 Քաղաքական ժողովոյն իմաց տայ և անոր հաստա-  
 առութեամբը 'ի գործ դրուի :

69 . Վարժարանին թէ սրահներուն և թէ  
 դասարաններուն մէջ որ և իցէ մէկը չ'կրնար ծուխ  
 քաշել :

70 . Վարժապետ մը իւր զբաղանայ ժամերէն  
 դուրս 'ի պահանջել հարկին արտօնութիւն ունի  
 տեսչին ծանուցանելով դուրս ելնել :

## ՎՈՒԽ ԺԱ

### ՏԵՄԵՒ 2 .

71 . Տեսուչը պարտաւոր է վարժարանիս կա-  
 նոնաց գործադրութեան ուշադիր ըլլալ և անթերի  
 'ի գործ դնել :

72 . Տեսուչը պարտաւոր է ամառը առաւօ-  
 աուն ժամը 7ին ու ձմեռը ժամը 8ին վարժարան  
 դալ , ու ճաշու ատեն մեկնիլ : Աոյնպէս կէսօրէն  
 ետե ժամը 4ին դտնուիլ 'ի վարժարան և արձակ-  
 մանէ ետքը մեկնիլ :

73 . Տեսուչը եթէ բանաւոր պատճառաւ մը  
 վարժարանէն պակսելու ըլլայ պարտի դրով ծա-  
 նուցանել խորհուրդին , և վարժապետներէն մէկը  
 իրեն փոխանորդ կարդել :

74 . Տեսուչը դասատուաց կողմանէ իրեն զըր-  
 կուած ծանուցադիրները կը քննէ և ըստ այնմ  
 պատիժ կը տնօրինէ յանցաւոր աշակերտաց :

75 . Աթէ տեսուչը առանց բանաւոր պատճա-

որ վարժարանէն պակսելու ըլլայ՝ ամէն մէկ անգամին համար 100 դահեկան կորսնցընելու է. իսկ եթէ ամիսը 4 անգամ պակսելու՝ ըլլայ անոր այն ընթացքը իբրև հրաժարական ընդունուելու է :

76. Տեսուչը երկու տետրակ պիտի ունենայ, մէկուն մէջ պիտի արձանագրուին վարժապետաց և աշակերտաց վարժարան մտնելն ու վարժարանէն ելնելն՝ իրենց ամէն մէկ պարագաներովը, իսկ միւսին մէջ՝ աշակերտաց գլխաւոր յանցանքներն և անոնց ու նաև վարժապետաց պակսիլը :

77. Տեսուչը եթէ վարժարանիս մէջ նոր տընօրէնութիւն մը ընելու հարկադրի, պէտք է որ խորհուրդին հաւանութիւնը ստանայ :

78. Տեսուչը դասատուութեանց ժամանակ պարտի դասարաններուն այցելութիւն ընել :

79. Տեսուչը և վարժապետք իրարու պակասութիւնը պէտք չէ որ աշակերտաց առջև յայտնեն :

80. Տեսուչը ծանր յանցանք գործող աշակերտները պէտք է որ Ուսումնական Խորհրդոյ ներկայացընէ :

## ՔԼԱԻԻ ԺԲ.

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

81. Ուսումնական Խորհուրդը՝ որ վարժարանիս հողաբարձութեան պաշտօնն ալ վրան առած է, վարժարանիս նպատակը անկողմնակալ պաշտպանութեամբ հաստատ պահելու, անոր կանոնաց գործադրութեան, յարաւելութեան և յառաջագիմութեան հոգ ու խնամք տանելու գործունեայ կերպիւ ջանալու է :

82. Խորհուրդին անդամները վարժարանիս

աշակերտաց վրայ հայրաքար խնամք տանիլ պարտին իբրև իրենց որդւոց վրայ • նաև տեսչին ու վարժապետաց պատիւը թէ աշակերտաց և թէ հասարակութեան առջև պարտին պաշտպանել անաչառութեամբ :

83. Խորհուրդին անդամները վարժարանէն դուրս տեսչին և վարժապետաց վրայօք եթէ դանդաւ մը լսելու ըլլան՝ առանց քննելու պիտի չի դատեն :

84. Խորհուրդին ներկայութիւնը վարժարանիս վրայ մեծ ազդեցութիւն ունենալուն՝ պէտք է որ անդամներէն դոնէ մէկը ամեն օր վարժարանցայ • իսկ շարաթը անդամ մը բոլոր անդամները պարտաւոր են անհրաժեշտ դալ և իրենց նիստը ընել :

85. Թէ որ Խորհուրդը վարժարանիս մէջ դիւաւոր տնօրէնութիւն մը ընել ուզէ՝ պէտք է որ Քաղաքական Ժողովին հաւանութիւնը ստանայ :

86. Խորհուրդին անդամներէն մէկը չ'կրնայ ինքնին վարժարանիս մէջ բան մը տնօրինել :

87. Երբոր տեսուչը յանցաւոր աշակերտ մը Խորհուրդին ներկայացընէ՝ պէտք է որ նստին քննութենէ ետքը անոր որոշուելիք պատիժը ըստ կանոնի 'ի դորժ դրուի :

ԳԼՈՒԽ ԺԳ .

ԴՌՆԱՊԱՆԻ

88. Վարժարանիս դոնապանները պարտաւոր են ներքին ծառայութեան դորժերը կատարելու :

89. Գոնապանները հոգ պիտի տանին վարժարանս կատարելապէս մաքուր պահելու :

90. Գոնապանաց մէկուն դ լսաւոր պարտքը պիտի ըլլայ վարժարանիս մեծ դռան պահպանութիւնը , որպէս զի այցելուի մը դալուստը տեսչին իմացընէ զանգակի հնչմամբ , իսկ միւսին պարտքը պիտի ըլլայ ճեմլից պահպանութիւն մանաւանդ այն ժամանակ երբ աշակերտք բնական հարկաւորութիւննին կատարելու վրայ են :

91. Գոնապանները երբէք պոռալով կանչելով պիտի չ'յանդիմանեն զաշակերտս , եթէ անկարդութիւն մը պատահելու ըլլայ անոնց մէջ՝ պարտական են տեսչին իմացընել :

92. Խոստիւ արդիլեալ է գոնապանաց աշակերտներու հետ առուտուր ընելը , և ընտանեկան կերպով վարվիլը :

93. Գոնապանք պարտական են թէ տեսչին և թէ ուսուցիչներուն հրամայած ծառայութիւնները անմիջապէս կատարել՝ եթէ դպրոցին վերաբերեալ են . իսկ եթէ դպրոցին վերաբերեալ չ'են ամենեին և ո՛չ ոք կրնայ դործ մը առաջարկել :

94. Գոնապանները առանց տեսչին դիտութեանը վարժարանի դռնէն դուրս չ'պիտի ելնեն :

95. Գոնապանները աշակերտաց արձակման ժամանակ հսկողութիւն պիտի ընեն անոնց վրայ մինչև որ տղայք տուներնին երթան , որպէս զի փողոցներուն մէջ անկարդութիւն մը տեղի չ'ունենայ :

96. Գոնապանները վարժապետներէն մէկուն հետ կէսօրուան ճաշը վարժարանիս մէջ ընող աշակերտաց վրայ պիտի հսկեն , և ամառ ձմեռ վարժա-

րանը պիտի մնան, որպէս զի վարժարանը առանց  
վարժապետի և դռնապանի չի մնայ :

97. Գոնապանները որ և իցէ աշակերտի մը  
թոյլտուութիւն չ'պիտի ընեն դուրս ելնելու առանց  
տեսչին գիտութեանը :

Ի Զմիւռնիա 1862 Օգոստոս 21

Անգամք Ուսումնական Խորհրդոյ

Պաշտօնաւոր Գ. Պալլաղարեան, Արեւուդէր :

Սրէֆան Մ. Յ. Տէրէեան, Արեւուդուլի :

Յովհաննէս Մարտիրոս :

Սրէֆան Մ. Ճարտարակոսեան :

Մանուէլ Խաչիկեան :



Р. У.

№ 6759